<<ԵՐԵՎԱՆԻ ԼԵՈՅԻ ԱՆՎԱՆ Հ. 65 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ>> ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Առարկա – Երգ – երաժշտություն

Մասնակից – Կարինե Մկրտչյան

Ղեկավար – Հռիփսիմե Խրիմյան

Թեմա – Ազգային մշակույթի արժեքների ձևավորումը <<Երաժշտություն>> առարկայի ընթացքում:

Երևան, 2022թ

Բովանդակություն

Ներածություն 1

1. Ազգային մշակույթի ձևավորումն ու զարգացումը. 2-6

2. Դպրոցը որպես ազգային մշակույթի պահպանման, զարգացման և փոխանցման միջոց. 7-13

3. Ազգային մշակույթը 21-րդ դարում. 14-

Օգտագործված գրականության ցանկ

1. Լ. Գ. Խաչերյան- <<Գլաձորի համալսարանը>> Երևան, 1973

2. Ա. Գզոյան - <<Տաթևի համալսարանը>>, Երևան, 2003:

3. Ա. Մովսիսյան - <<Ուրվագծեր հայ դպրոցի և մանկավարժության պատմության>>, Երևան, 1953

4. Ա Ժամկոչյան- <<Հայ ժողովրդի պատմություն>>, Երևան, 1992:

5. Մ. Սանթրոսյան- <<Արևելահայ դպրոցը 19-րդ դարի առաջին կեսին>>, Երևան, 1964:

6. Գ.Նազիկյան- <<Արևմտահայ մանկավարժական միտք ու դպրոց>>, Երևան, 1969:

7. Վ. Երկանյան- <<Պայքար հայկական նոր դպրոցի համար Անդրկովկասում>>, Երևան, 1970:

8. Ն. Սարգսյան և Ա. Իգնատյան- <<Կրթությունը XIX դ. և XX դ. սկզբին>>:

9. Գ. Մարգարյան- <<Ազգայինը և վերազգայինը մշակույթում>>:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Արվեստը բոլոր ժամանակներում կարևոր դեր ու նշանակություն է ունեցել մարդու՝ որպես հասարակության անդամի ձևավորման գործում։ Հայաստանը գտնվելով երկու մշակույթների՝ արևելյան և արևմտյան արվեստների խաչմերուկում և լինելով աշխարի հնագույն ժողովուրդներից, ով անցել է պատմության դժվարին ճանապարհով, համադրել է երկու քաղաքակրթությունների ձեռքբերումները և ստեղծել մշակույթի մի որակ, որը հատուկ է միայն հային։

Այսօր էլ, մոտ 5000ամյա հայ մշակութային ժառանգությունը անցնելով արհավիրքների և փորձությունների միջով, շնորհիվ անհատների, որոնք պատասխանատու են հայ մշակույթը պահպանելու, դաստիարակչական նպաստավոր պայմաններ ստեղծելու, զարգացնելու գարծընթացի համար, պետք է շարունակեն բարձրացնել ազգային մշակույթի նկատմամբ հետաքրքրությունը ինչպես Հայաստանում, այնպես էլ նրա սահմաններից դուրս, մշակույթ, որը անքակտելի մասն է կազմում երաժշտարվեստը;

1. ԱԶԳԱՅԻՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Գրականությունը, արվեստը և ընդհանրապես մշակույթը որքան ազգային, այնքան համամարդկային են: Տարբեր ազգերի մշակույթներն իրենց խորքային երևույթներով շատ ընդհանրություններ ունեն, բայց նաև տարբերություններ, որոնցով էլ բնորոշվում է այս կամ այն ժողովրդի գրականության, արվեստի և ընդհանրապես ազգային մշակույթի դիմագիծը: Մինչ թուրքական արշավանքները համաշխարհային արվեստում և գրականության մեջ կային որոշակի ընդհանրացումներ, համընդհանուր գծեր, նմանություններ: Բայց 11-14-րդ դարերում թուրքական արշավանքների պատճառով Արևելքն ու Արևմուտքը անջրպետվեցին, զգալիորեն թուլացան մշակութային այն կապերը, որ գոյություն ունեին Արևելքի և Արևմուտքի միջև: Աշխարհի մշակույթների զարգացման բնականոն ընթացքը երկփեղկվեց՝ արվեստում ստեղծելով, այսպես կոչված, ասիակենտրոն և եվրոկենտրոն որակները:

Հայաստանն իր աշխարհագրական տարածքով ընկած է Արևելքի և Արևմուտքի խաչմերուկում: Եվ այս պարագայում ծագում է հարց .<<Որոնք են հայ մշակույթի, գրականության ազգային առանձնահատկությունները>>: Հայերս լինելով աշխարհի հնագույն ժողովուրդներից, անցել ենք պատմության դժվարին ճանապարհներով: Ապրելով Արևելքի և Արևմուտքի սահմանագծում, համադրել ենք երկու ինքնատիպ քաղաքակրթությունների կենսունակ ավիշը, ստեղծելով կենսառճի և մշակույթի մի որակ, որ հատուկ է միայն մեզ: Դա ուղղակի մեխանիկական համադրում չի եղել, այլ հոգևոր խմորումների տևական ու բարդագույն մի գործընթաց, որ թելադրվել է ազգի պատմությամբ: Ուստի, ազգայինը շոշափելու համար մեզ հարկավոր է տեսնել հայկականի մեջ առկա կայուն կրկնությունները և անկրկնելի անհատականությունը: Հայկական մշակույթը ուրիշ ժողովուրդների մշակութային շղթայում յուրահատուկ դերում է:

Նիկողայոս Ադոնցի բնորոշմամբ հայ ժողովրդի հոգևոր արժեքների ամբողջականությունը մի հսկայածավալ գետ է, որի ջրերը ոռոգում են ոչ միայն հարազատ հողն ու անտառները, այլև հուժկու թավալվում են դեպի ընդհանուր քաղաքակրթության օվկիանոսը:

Ժամանակների նորացման հետ, ինչպես մյուս հնագույն ժողովուրդների մշակույթը, հայկականը նույնպես պատմական ու մշակութաբանական բազմաթիվ ազդակների շնորհիվ, փոխվեց և գնաց ինքն իր մեջ խորանալու և իրենը հայտնաբերելու ճանապարհով: Հատկապես քրիստոնեության առաջացումից հետո, երբ առավել սուր ձևով դրսևորվեց Արևելք-Արևմուտք մշակութային բևեռների հակասությունը, գնալով ավելի ընդգծվեց հայկականի ազգային որակը: Գտնվելով երկու բևեռների արանքում և ենթարկվելով երկկողմյա քաղաքական ու դավանաբանական ճնշումների, հայությունը ստիպված եղավ ընդիմանալ և՛ մեկին, և՛ մյուսին: Առանձին դեպքերում էլ հարել դրանց, կամ էլ բռնել յուրահատուկ սինթեզի ուղին: Արևելքում պաշտոնապես առաջինը ընդունելով քրիստոնեական կրոնը, հայությունը հայտնվեց յուրահատակ վիճակում:

Հայերը ստիպված էին մի կողմից ընդդիմանալ Զրադաշտին, մյուս կողմից՝ 325 թվականին Նիկեայի ընդհանուր եկեղեցական և 432-ին Եփեսոսի աստվածաբանական ժողովների պահանջներին։ Այս ամենը քաղաքական, դավանաբանական դրսևորումներ լինելով հանդերձ, ուներ նաև իր մշակութաբանական ենթատեքստը։ Արտաշատում գումարված հայոց կրոնական ժողովը վճռական եղավ այս տարուբերումների մեջ կողմնորոշվելու հարցում։ Հայությունը դրսևորեց քրիստոնեական կրոնի իր ուղղությունը, որով պայմանավորված մշակույթը միտված էր դեպի Արևմուտք՝ ունենալով իր ազգային դիմագիծը։ Դարերի փորձը հետագայում ցույց տվեց, որ մեր հոգևոր այս յուրահատուկ թեքվածությունը ճակատագրական նշանակություն ունեցավ՝ ազգային ինքնապահպանության առումով։ Դավանաբանական և մշակութային այս ճեղքվածքը վերացվեց հայ գրերի ստեղծումից հետո, երբ թարգմանվեց Սուրբ գիրքը և սկիզբ դրվեց ազգային գրավոր մշակույթի և դպրության զարգացմանը։ Հայ իմաստասիրական, դավանաբանական միտքը ամեն ինչ անում էր կանխելու զրադաշտի վտանգը։ <<Մի աշխարհը երկու իշխող չի ունենա, ոչ էլ մի արարածը երկու աստված։ Եթե մի աշխարհին հանդգնեն իշխել երկու թագավորներ, աշխարհը կփչանա...>> գրում էր Եղիշեն։

5-րդ դարը հայերիս համար դարձավ ազգային դիմագծի վերջնական ճշտման ժամանակաշրջան, որի ընթացքում մեծ դեր խաղաց բուռն զարգացում ապրող հայ մշակույթը՝ պատմագրությունը, փիլիսոփայությունը, աստվածաբանությունը, որոնցից յուրաքանչյուրն ուներ իր ուրույն խնդիրը։ Պատմագրությունը պարզաբանում էր, թե ովքեր են հայերը, որտեղից են գալիս, աստվածաբանությունը՝ քրիստոնեական կրոնի էությունը, փիլիսոփայությունը՝ գոյերի տեսությունը։

Ժամանակաշրջանի հայ մատենագիրները մերժում էին ոչ միայն Պարսկաստանի ու Բյուզանդիայի պարտադրվող քաղաքականությունը, այլև քաղաքական ենթատեքստ ունեցող փիլիսոփայությունն ու դավանաբանությունը։ Մշակութային ընդդիմությունը այս շրջանում մեզ համար կենսական նշանակություն ուներ։ Խորենացին իր <<Հայոց պատմության>> մեջ պարսկական առասպելները համարում էր՝ սուտ, անիմաստ և անհանճար։ Եղիշեն գրում էր, որ մենք այլևս առասպելներին չենք հավատում։ Եզնիկ Կողբացին <<Եղծ աղանդոցում>> մի կողմից մերժում էր պարսկական զրադաշտը, մյուս կողմից՝ անտիկ Հունաստանի փիլիսոփայությունից ածանցվող աղանդները, քանի որ վերջիններս, ընդունելով աստծո գոյությունը, մյուս կողմից հանգում էին գոյերի սկզբնապատճառ հյուլեին և նախախնամությանը։ Իբրև հայ նոր գրականության հիմնադիր, առանձնակի է հատկապես Խաչատուր Աբովյանի դերը, որն անխոս, իր նշանակությունն ունեցավ մշակույթի հետագա զարգացման մեջ։

Արևելյանից բացի նա յուրացրել էր եվրոպական մշակույթի նվաճումները, գրական ուսմունքները, բանարվեստային օրենքները։ Աբովյանի երկերում, մասնավորապես՝

<<Վերքում>> պարզորոշ երևում է այս յուրահատուկ համադրությունը: Աբովյանը զգում էր այդ համադրության անհրաժեշտությունը: <<Եվրոպա թե Ասիա՝ ինձ անդադար ձեն են տալիս, թե հայկազյան եմ ես, ուստի հարկավոր է բացել Հայոց միջի հունարը>>: Ինչպես տեսնում ենք, եվրոպականը և ասիականը խորապես զգացող Աբովյանը որոնում էր հայկականի դրսևորման ձևը:
Խնդիրը լայն պլանով շատ է հետաքրքրել հայ գրականության և մշակույթի մեծերին: Դ. Դեմիրճյանը <<Կոնսերվատորիայի առաջին կոնցերտի առիթով>> հոդվածում այն կարծիքն է հայտնում, որ հայ ազգային օպերայի մելոսը պետք է հենվի արևելյանի վրա, կառուցվածքը՝ արևմտյանի:

Այս զուգահեռներին անդրադառնալիս Դեմիրճյանը ընտրում է այնպիսի արվեստագետների, որոնց գործերում մշակութային բևեռացումները պարզ երևում են, ասենք՝ Չուխաջյան (Արևմուտք), Սպենդիարյան (Արևելք): Ճարտարապետության մեջ Հալաբյանի եվրոպական կոնստրուկտիվիզմը, և Թամանյանի արվեստի Արևմուտքի և Արևելքի սինթեզը: Նույն մեթոդն ունի Կոմիտասը: Նա իր մշակումներում խմբագրում էր ոչ թե խորքային արևելյանը, այլ արևելյանի ավելորդաբանությունը, որ հետագայում նաև ներմուծվեց ժողովրդական երգարվեստի մեջ:
Ազգային արվեստի մեծերը մեծ են նաև այն բանի համար, որ կարողանում են հաղթահարել այս բևեռացումները, գտնել սեփական աշխարհի գույների համադրման ազգային ձևը՝ հաստատելով այն գաղափարը, որ ճշմարիտ ազգայինը նույնքան համամարդկայինն է:
Այսքանով որոշակիորեն ուրվագծվեցին ազգային մշակույթի ձևավորման ու զարգացման ընթացքն ու ուղիները:

2. ԴՊՐՈՑԸ ՈՐՊԵՍ ԱԶԳԱՅԻՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ, ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՓՈԽԱՆՑՄԱՆ ՄԻՋՈՑ

Ներկա ժամանակաշրջանում Ռուսաստանի, Եվրոպայի կամ ավելի ճիշտ եվրասիացված ու ամերիկանացված ներգործությունները հայկական մշակույթ ավելի կարևոր են դարձնում մշակույթում <<ազգային>> հասկացությունը: Բոլորին է հայտնի, որ այս հանգամանքում վճռական դեր պետք է խաղա կրթական համակարգը և սա պատահական չէ: Հարկավոր է մի պահ հետ հայացք ուղղել պատմությանը և պարզորոշ կերևա, որ հայոց դպրության ստեղծման իսկ օրից, այն կրել է այս ազգապահպան պարտավորությունը: Ասածիս ճշմարտացիությունն ապացուցելու նպատակով պատմական փոքրիկ շրջայց կատարենք:
Հայոց դպրոցի բուն պատմությունն անխզելիորեն կապված է գրերի ստեղծման հետ: Մեսրոպ Մաշտոցը, հայ գրերը ստեղծելուց հետո ձեռնամուխ է լինում կրթատներ հիմնելու

գործին: Առաջին դպրոցը բացվել է Վաղարշապատում: Սկզբնական շրջանում դասավանդվել են Սուրբ գիրքը, վարքաբանություն և եռյակ գիտությունները՝ քերականություն, ճարտասանություն, դիալեկտիկա /տրամաբանություն/, հետագայում նաև աստղաբաշխություն, բարոյագիտություն, թվաբանություն և այլ առարկաներ:

9-րդ դ. արաբական լծի թոթափումը, հայկական պետականության վերականգնումը, և դրա հետ կապված տնտեսական կյանքի, ինչպես նաև քաղաքների զարգացումը, նպաստավոր պայմաններ ստեղծեցին հայկական մշակույթի զարգացման համար: Բագրատունիները և Զաքարյանները Հայաստանում, իսկ Ռուբինյանները Կիլիկիայում հովանավորում էին գիտությունը, գրականությունն ու արվեստը: Նախնական կրթությունը սկսվել է 7 տարեկանից և տևել 3-5 տարի: Սովորեցրել են գրաճանաչություն, ընթերցանություն, արտասանություն, թվաբանություն, երաժշտություն, նկարչություն, նախնական գիտելիքներ տվել կրոնից, պատմությունից, աշխարհագրությունից և այլն: Միջնակարգ դպրոցներում ուսուցանել են քերականություն, ճարտասանություն, գրչության արվեստ, նկարչություն, պատմություն, աշխարհագրություն, մաթեմատիկա և այլն: Վարդապետարաններում դասավանդել են աստվածաբանություն, իմաստասիրություն, տրամաբանություն, իրավագիտություն, դիվանագիտություն, բժշկագիտություն և այլն: Ուսուցումը տարվել է ժողովրդի խոսակցական լեզվին մոտ՝ կիլիկյան միջին հայերենով:
Պռոշյաններն իրենց գոյատևման ամբողջ ընթացքում առանձնահատուկ ուշադրությունն են դարձրել լուսավորական օջախների լայն ցանցի ստեղծման վրա: Ուսուցչապետ Ներսես Մշեցին, Վարդան Արևելցուց հետո Վայոց ձորում՝ Պռոշյանների տիրապետության տարածքի սահմաններում ստեղծում է Գլաձորի համալսարանը: Գլաձորի շրջանավարտները անուրանալի ավանդ ունեն պատմագիտության, գեղարվեստական գրականության, մանրանկարչության, քերականության, փիլիսոփայության, մանկավարժության, աստվածաբանության բնագավառներում:

Գլաձորի նախկին սան, տաղանդավոր գիտնական Հովհան Որոտնեցին ստանալով Օրբելյան իշխանների հովանավորությունը՝ 1340-ական թ. կեսերին ստեղծում է Տաթևի համալսարանը, որի գլխավորությամբ հաստատվում են մի շարք դպրոցներ, և Տաթևը դառնում է այդ դպրոցների կենտրոնը: Որոտնեցու գործը շարունակեց նրա ամենատաղանդավոր սանը՝ Գրիգոր Տաթևացին: Որոտնեցու և Գր. Տաթևացու ժամանակակիցներից քչերն են այդքան պարզ գիտակցել, որ տվյալ պատմական պայմաններում ազգային մշակույթի պահպանումն ու զարգացումը, հոշոտված Հայաստանի համար գրեթե միակ միջոցն էր տգետ ու բիրտ զավթիչներին ընդդիմանալու համար: Իսկ ի՞նչ հարաբերության մեջ էին գտնվում հայ միջնադարյան համալսարանների դասընթացները եվրոպական համալսարանների դասընթացների հետ: Գլաձորի և Տաթևի համալսարանների ձեռնարկ-դասագրքերը ոչ միայն լիովին համընկնում են եվրոպական համալսարանների <<յոթն ազատ արվեստների>> դասընթացներին, այլև

մեր դպրությունը դեռ շատ ավելի վաղ ժամանակներից մշակել էր <<յոթն ազատ արվեստների>> տեսությունը:

Դեռևս 5-6-րդ դարերում ուսուցումը կատարվում էր ըստ <<Սահմանք իմաստասիրության>> տեսական աշխատության, ուր գիտական առարկաներն ու դասընթացները բաժանվում են Եռյակի և Քառյակի: Հատկապես քառյակի դեպքում, այն լիովին համապատասխանում է եվրոպականին, միայն այն աննշան տարբերությամբ, որ այդ առարկանները դիտվել են որպես <<մաթեմատիկա>> ընդհանուր գիտության բաղկացուցիչ մասեր:

Խոշոր գիտնական և հասարակական գործիչ Գրիգոր Մագիստրոսի թղթերում պարզորոշ խոսվում է <<Յոթն ազատ արվեստների>> մասին՝ այն անվանելով <<ներշրջական արհեստք>>, իսկ նրա բաժինները՝ <<արհեստք երիցն>> և <<արհեստք քառիցն>>: Դատելավ վերոնշյալ փաստերից՝ հայ միջնադարյան համալսարաններն իրենց զարգացվածությամբ և առարկայական - գիտական պաշարով ոչ միայն հավասար մակարդակի վրա էին գտնվում եվրոպական համալսարանների հետ, այլև ժամանակային առումով մի քանի քայլ առաջ էին գտնվում նրանցից: Ուրեմն հարց է, թե ով ումից է կրկնօրինակել կրթական համակարգը կամ ծրագրերը:

18-րդ դ. սկզբին երևան է գալիս մի նոր հայ կրթարան, որը խոր հետք է թողել հայ ժողովրդի մշակույթի պատմության մեջ: Մխիթար Սեբաստացին 1717-ին Վենետիկի Ս. Ղազար կղզում միաբանության վանքին կից հիմնել է դպրոց, որը հետագայում դարձել է ճանաչված ուսումնագիտական կենտրոն:

Հայ ժողովուրդը, պատմության ճակատագրի բերումով բաժանված լինելով երկու հիմնական հատվածի, ստիպված էր իր մշակույթը զարգացնել հասարակական քաղաքական տարբեր պայմաններում: Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին և հայ-ռուսական կապերի ուժեղացումը հնարավորություններ ստեղծեցին, որպեսզի հայկական մշակույթն ավելի սերտորեն առընչվի ռուսական առաջավոր մշակույթի հետ: Արևմտահայ հատվածն ավելի շատ կրում էր եվրոպական, հատկապես ֆրանսիական մշակույթի ազդեցությունը:

Արևելահայ կրթական գործում կարևոր դեր է կատարել Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը: Այն հայկական միջնակարգ դպրոցների մեջ ամենանշանավորն է և բացառիկ դեր է խաղացել հայ ժողովրդի կյանքում: Այն հանդիսացել է հայկական մշակույթի փայլուն օջախներից մեկը: Բացառիկ կարևոր դեր է խաղացել Ներսիսյան դպրոցը հայ աշխարհաբար գրական նոր լեզվի ձևավորման ու զարգացման հարցում:

19-րդ դ. 1-ին կեսը և հատկապես 50—60-ական թթ. հայ ազգային դպրոցի համար գաղափարական որոնումների շրջան էր: Հայ լուսավորականները, առաջնակարգ տեղ հատկացնելով դպրոցին, գտնում էին, որ այն պետք է երեխային դաստիարակի վառ

հայրենասիրության ոգով, ժողովրդի հերոսական անցյալից վերցրած ոգեշունչ օրինակներով: Նրանք ջանում էին, որ կրթություն ստանան հասարակ ժողովրդի զավակները:

Արևմտահայերի կրթական և մշակութային կյանքում մեծ դեր են խաղացել Մխիթարյանների հիմնած Փարիզի Մուրադյան և Վենետիկի Ռափայելյան վարժարանները, Մեսրոպյան վարժարանը Զմյուռնիայում, Հայոց մարդասիրական ճեմարանը Կալկաթայում, Երամյան վարժարանները Վանում, Սանասարյան վարժարանը Կարինում ևս: Մանկավարժական առաջին կրթական հաստատությունը Վանի վարժապետանոցն էր:

Կիլիկիայի կենտրոնները բավական աշխույժ կրթական, մշակութային կյանք են ունեցել: Ամենանշանավորն Այնթապն էր: 1910-ին Այնթապում կար 14 հայկական ազգային ու մասնավոր, ինչպես նաև 10 այլ դպրոց, ուր սովորում էր մոտ 3500 աշակերտ: Մեծ եղեռնի պատճառով կրթական գործը Արևմտյան Հայաստանում լիակատար անկում ապրեց:

Հայ ժողովրդի ազգային վերածննդի, նրա հոգևոր ուժերի ծաղկման, կրթական գործի զարգացման համար լայն հնարավորություններ ստեղծվեցին սովետական կարգերի հաստատումից հետո: Սովետական իշխանությունը նախատեսում էր վերացնել հետամնացությունը, մասսայական անգրագիտությունը, պայմաններ ստեղծել մշակույթի նվաճումները ժողովրդին մատչելի դարձնելու համար, փոփոխել ուսանողների ու աշակերտության սոցիալ կազմը, կիրառել համընդհանուր, պարտադիր ուսուցում: Հայաստանի Հեղկոմի 1920թ. դեկտեմբերի 6-ի դեկրետով հանրապետությունում պետական լեզու ճանաչվեց հայերենը: 1985-1986 ուս. տարում հանրապետությունում գործել է 1479 հանրակրթական դպրոց:

Հայոց 3-րդ հանրապետության ստեղծումից ի վեր հայկական հանրակրթությունը գտնվում է մի փուլում, երբ և՛ աշխարհաքաղաքական պայմանների, և՛ դարաշրջանի հետ կապված, անխուսափելի է դառնում եվրոպական և ամերիկյան անհամեմատ լիբերալ մանկավարժագիտական դրույթների ընդունումը, կիրառումը դպրոցական պրակտիկայում: Միայն խնդիրն այն է, որ դրանք ավելի շատ թելադրված լինեն դպրոցի ցավերով ու խնդիրներով և ոչ թե պարտադրված լինեն զուտ միջազգային խաղի օրենքներով: Այս փոփոխությունների ընթացքում պետք է շատ զգոն և աչալուրջ լինել՝ թույլ չտալով, որ օտարամուտ, օտարածին արժեքները ներխուժեն հայ իրականություն և խաթարեն մեր դարավոր պատմական նկարագիրը: Գլոբալացման գործընթացում պետք է հետամուտ լինել նորովի պահպանելու մեր ազգային հոգեկերտվածքը, հոգևոր ու բարոյական նորմերը, որոնք օրգանապես հյուսված են մեր ազգային կրթահամակարգի հետ: Կրթական քաղաքականության գլխավոր և առաջնային նպատակը պետք է լինի ազգային-պետական շահերին համապատասխան սերնդակրթություն ապահովելը: Երբ նորը, օտարը, դեռևս չհամապատասխանեցված մեր կրթական պահանջներին ներմուծվում է դպրոց, աղավաղում է հայեցի դաստիարակությունը և ազգային արժեքների փոխանցումը:

Ես ինքս հակված եմ մտածելու, որ հայ ժողովուրդը հիմնականում լինելով ավանդապահ, այնուհանդերձ միշտ էլ տրամադրված է եղել զարգացման և փոփոխությունների, միայն թե դրանք իրագործվեն որևէ ազգային ծրագրի շրջանակներում, ճանաչում և հեղինակություն ունեցող մասնագետների մասնակցությամբ, ուսուցիչների և աշակերտների կարծիքների հաշվառմամբ: Մեր երկրի կրթական համակարգի խնդիրը ոչ միայն գլոբալացման համաշխարհային պրոցեսներին համաքայլ ընթանալն է, այլև մեր հնագույն, ազգային ավանդույթների պահպանելը և սերունդներին փոխանցելը: Չէ որ դարերի ընթացքում անգամ պետականություն չունենալով դպրոցները ինչպես բուն Հայաստանում ու Կիլիկիայում, այնպես էլ գաղթավայրերում ժողովրդի մեջ գրագիտություն տարածելուց բացի, եղել են գիտական, մշակութային, մատենագրական, ազգային-հասարակական կենտրոններ, գրականության և գիտության, արվեստի ստեղծման ու տարածման կրթատներ, արձագանքել ժամանակի կարևոր իրադարձություններին: Դպրոցը եկեղեցու հետ միասին արժանիորեն իր ուսերի վրա է կրել ազգի մշակույթի պահպանման ու փոխանցման գործը:

3. ԱԶԳԱՅԻՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ 21-ՐԴ ԴԱՐՈՒՄ

Հիմնախնդիրներ.

Ցավոք, անկախացման տարիների ընթացքում ձևավորվել և արմատավորվել է իսկական արժեքները ժողովրդին չպարտադրելու յուրատեսակ գաղափարախոսությունը: Ոմանք մեզ հավաստիացնում են, թե դեպի ազգային մշակույթը տանող ճանապարհն ընկած է մեր հեռուստատեսությամբ ներդրվող արևմտյան մշակույթի մաս կազմող ծրագրերի միջով, մյուսները համոզված են, որ Կոմիտաս հասկանալու համար պետք է անցնել ռաբիսի միջով: Այսպիսով, մենք հայտնվում ենք երկընտրանքի առջև, կամ բոլորս միասին իջնենք, մեղմ ասած, ոչ ազգայնական գաղափարախոսների կողմից մեզ պարտադրվող միջին վիճակագրական մակարդակից ներքև, կամ փորձել, մինչև համաշխարհային մակարդակ բարձրացնել մշակույթը:

Հայկական հեռուստատեսությունում այսօր, չնչին բացառություններով, չեն կարող <<կյանքի>> ուղեգիր ստանալ մշակույթի և գիտության տարբեր բնագավառների մասին ժողովրդի իրազեկմանը կոչված լուրջ նախագծեր: Հավանաբար, արժե ունենալ մեկ-երկու ոչ առևտրային հեռուստաալիք՝ ֆրանսիական շուրջօրյա <<Mezzo>>-ի կամ ռուսական

<<Культура>>-ի նման:
Հայերը միշտ էլ եղել են մշակութակենտրոն ազգ: Այսօր մենք չենք կարող ոտք մեկնել տիեզերանավեր և միջուկային սուզանավեր գործարկող մեծ տերությունների հետ, բայց մշակույթը այն ոլորտն է, ուր մենք ի վիճակի ենք մրցակցել աշխարհի մեծագույն ազգերի հետ: Ուրեմն, ինչո՞ւ ինքներս մեզ ցույց չտանք այնտեղ, որտեղ ուժներս պատում է:

Մեր օգտապաշտ դարում արվեստի և մշակույթի կրթության նկատմամբ միայն սիրո վրա փոխհարաբերությունների կառուցումն անհնար է: Այս ուղղությամբ ավելի որոշակի քայլեր են անհրաժեշտ մեր կառավարության կողմից:

Հիրավի, մենք <<դատապարտված ենք>> հոգով ուժեղ լինել, իսկ մշակույթի ասպարեզում հանդիսանալ աշխարհում առաջատար ազգերից մեկը: Եվ այսօր կյանքի հրամայականով մեր արվեստը միջազգային հանրությանը ներկայացնելիս նույնպես մեզ պետք է լինել առաջիններից մեկը:
Մշակութային ճիշտ քաղաքականության դեպքում արվեստը կարող է դառնալ մեր համեստ բյուջեն լցնող աղբյուրներից մեկը: Հարկավոր է օգտագործել մշակույթը, և այդ մշակույթի շնորհիվ փոխհատուցել տնտեսական կորսված միջոցները:

Լուծումներ.
Գիտակցելով, որ մշակույթը ցանկացած ազգի ոգին է և առաջնակարգ դեր ունի նրա կյանքում՝ ոչ միայն ընդհանուր քաղաքակրթական մակարդակի, այլև ազգապահպանության առումով, հետեւաբար՝ ներկայացնում եմ այս խնդրի շուրջ առաջարկներս:

Պետության առաջնահերթ խնդիրներից մեկը պետք է լինի ազգային մշակույթի պահպանման, զարգացման, ստեղծման և փոխանցման համար նպաստավոր պայմանների ստեղծումը, որի համար պետք է.
- բարձրացնել ազգային մշակույթի նկատմամբ հետաքրքրությունը.
- մշակույթի միջոցով իրականացնել ազգային կրթության.
- տանել ազգային մշակութային քարոզչության ակտիվ աշխատանք, ինչպես ներսում, այնպես էլ արտերկրում, այդ թվում՝ համացանցով իրականացնել համալիր ծրագրեր.
- մշակութային դաստիարակությունը սկսել նախադպրոցական տարիքից՝ սեր սերմանելով նախնառաջ ազգային մշակույթի հանդեպ.
- հատուկ ուշադրության արժանացնել թանգարաններն ու գրադարանները՝ որպես նոր սերնդի դաստիարակության և մշակութային արժեքների պահպանության կենտրոններ.
- մշակութային, կրթական և գիտական կյանքի ապակենտրոնացումը մայրաքաղաքից դուրս գտնվող օջախներում, խրախուսել նորերի ստեղծման նախաձեռնությունները.

- մեծացնել մշակութային հաստատությունների նկատմամբ պետական հոգածությունը.
- պետական, կամ հովանավորչական մակարդակով տեր կանգնել բոլոր այն նախաձեռնություններին, որոնք կնպաստեն ազգային մշակույթի պահպանմանն ու զարգացմանը.
- մշակույթի ազգային գործիչներից ստեղծել<<շրջիկ>> խումբ, որը կշրջի հանրապետության ողջ տարածքով և կուսուցանի ազգային պար, երգ-երաժշտություն և այլն.

Իսկ հիմա ազգային մշակույթի պահպանման, զարգացման և փոխանցման համատեքստում ներկայացնեմ այն առաջարկներս, որոնք հասցեագրված են դպրոցին: Բազմիցս խոսվել է մեր կրթական համակարգի ոչ լիարժեք, թերի լինելու մասին, սակայն ոչ միշտ է, որ թերությունները վեր հանելու հետ մեկտեղ՝ առաջարկվում են իրավիճակը շտկելուն ուղղված ինչ-որ միջոցառումներ: Առաջարկում եմ.
- պարտադիր կերպով դպրոցներում /ինչպես պետական մակարդակով, անյպես էլ սեփական նախաձնությամբ/, իրականացնել ազգային մշակույթի պահպանմանն ու զարգացմանն ուղղված բազմապիսի միջոցառումներ.
- խրախուսել այն մանկավարժներին, ովքեր առանձնահատուկ ծրագրեր կիրականացնեն և իրենց անձնական նպաստը կբերեն սերնդին ազգային դաստիարակություն տալու գործում.
- առաջնահերթության կարգով դպրոցում իրականացնել այն ծրագրերը, որոնք բխում են ազգային գաղափարախոսությունից և նպաստում են ազգային մշակույթի կրթմանը.
Ինչպես նաև առաջարկում եմ, որ պարտադիր կերպով դպրոցներում ուսուցանվի հայագիտություն առարկան: Աշակերտը պետք է իմանա թե ով է ինքը՝ ուսումնասիրելով սեփական ազգի հոգեբանությունն ու ազգային առանձնահատկությունները: Իհարկե դպրոցում դասավանդվում է հայրենագիտություն առարկան, որն ավելի շուտ Հայաստանի պատմական աշխարհագրություն է, հետո էլ առարկան դասավանդվում է 5-րդ դասարանում:

Այսպիսով՝ գտնում եմ, որ դպրոցներում սկսած 8-րդ դասարանից Հայագիտության ուսուցանումը պարտադիր է:
Այս առարկան իր մեջ պետք է ներառի 4 գլխավոր ճյուղեր, բաժիններ, որոնց համալիր կրթության արդյունքում էլ կիրականանա հայագիտություն առարկայի լիարժեք ուսուցումը: Չորս գլխավոր բաժիններն են.
1. Ազգային պար. 2. Ազգային տոներ, ծեսեր, ավանդույթներ. 3. Դասական հայերեն. 4. Արվեստի պատմություն.
Համոզված եմ, որ դպրոցներում այս առարկայի ներդրումը մեծապես կնպաստի ազգային մշակույթի պահպանման, զարգացման և փոխանցման գործին:

Այսօր մենք ազգային մշակույթի ահռելի ժառանգությունը պահպանելու, զարգացնելու և փոխանցելու խնդիր ունենք: Եթե այսօր մենք և բոլոր այն անհատները, խմբերը, կազմակերպությունները, ովքեր պատասխանատու են ազգային մշակույթի պահպանման, զարգացման, և ժառանգականության ապահովման համար, մի պահ, մի ակնթարթ պատկերացնեն, գիտակցեն ու հասկանան, թե մեր մշակույթը ինչ պատմական ընթացք, ճանապարհ է անցել, հատկապես պատմության ոչ նպաստավոր դարերում, դիմագրավելով բոլոր փորձություններին ու արհավիրքներին ու հասել 21-րդ դար, ապա համոզված եմ, որ մեր առնվազը 5000-ամյա մշակութային ժառանգությունը կլինի ապահով ձեռքերում…

Եթե մեզանից հանենք մարդկության մեծագույն չարիք անտարբերությանը, որը մարդկային չարիքներից ամենասոսկալին և սպանիչն է, ամենադաժան դատավորն ու վրեժխնդիր ներկան, ապա շատ խնդիրներ այլ լուծումներ կստանան: Արհամարհանքը լավագույն զենք է, շատ սպանիչ արարք, դիմացինին նվաստացնելու համար: Բայց ինչու՞, եթե դրա փոխարեն կարող ենք մեր հոգիներում բարության ու նվիրվածության սերմեր աճեցնել:

Սիրո հակասությունը, ավաղ, ատելությունը չէ, այլ անտարբերությունը: Ավելի լավ է ապրել որևէ զգացմունք, նույնիսկ բացասական, քան լինել անտարբեր: Այն խոցում է, վիրավորում, սպանում և ջնջում, անէացնում է ամեն ինչ: Անտարբերությունը սկիզբն է մի դատարկ աշխարհի, իսկ ավելի ճիշտ անտարբերությունը վերջն է աշխարհի:

Սկսում եմ վախենալ, վախենալ, որ մի օր անտարբերությունը կհաղթի: Վախենում եմ, որովհետև ցավոք, այսօր նկատելի է, որ անտարբերությունը դանդաղ և ճշգրիտ իր ազդեցությունն է տարածում մարդկանց ավելի մեծ քանակի վրա և ստեղծում հոգևոր ճգնաժամ: Եթե մենք դուրս չգանք այդ հոգևոր ճգնաժամից, իրավիճակն ավելի կբարդանա: Մեր կյանքը կդառնա սովորական, մոխրագույն, ամբողջովին զուրկ հոգևորությունից կամ պարզապես կլինի անմիտ և անշունչ գոյատևություն: Եվ այդ ամենի հիմքում ընկած կլինի անտարբերությունը:

Եկեք հուսանք ու հավատանք մեր հնարավորություններին, հանենք մեր ներսից անտարբերությունը: Ես հավատում եմ, ու ինչպես միշտ, իմ գործով շարունակում պայքարել անտարբերության դեմ: